



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 245-Վ/Ձ

« 10 » 07 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2019-2020
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ,
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի «ՀՀ բարձրագույն
ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա
պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության
մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների ընդունելության կարգը
հաստատելու մասին» N700-Ն և ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի «ՀՀ
նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական
հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու
մասին» N1295-Ն որոշումները՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին
մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր
իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ ուսումնական
հաստատություն) 2019-2020 ուսումնական տարվա համար օտարերկրացիների և
սփյուռքահայերի փաստաթղթերի ընդունման ժամանակացույցը՝ համաձայն N1
հավելվածի:
2. Հաստատել օտարերկրյա և սփյուռքահայ դիմորդների փաստաթղթերի ընդունման,
հաշվառման և փորձաքննության անցկացման կազմը՝ համաձայն N2 հավելվածի:
3. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝
Նախարարություն) արտաքին կապերի և սփյուռքի վարչությանը (պետ՝ Արկադի
Պապոյան)՝

- 1) սույն հրամանի 1-ին կետով սահմանված ժամանակահատվածներում ապահովել օտարերկրացիների և սփյուռքահայերի փաստաթղթերի ընդունման, փորձաքննության և հաշվառման գործընթացների կազմակերպումը.
- 2) կազմակերպել օտարերկրացիների և սփյուռքահայերի փաստաթղթերի բաշխումը ՀՀ ուսումնական հաստատություններ՝ համաձայն ներկայացված դիմումների:
4. ՀՀ ուսումնական հաստատությունների ղեկավարներին՝ օտարերկրացիների և սփյուռքահայերի փաստաթղթերի ընդունումն իրականացնել բացառապես ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 700-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա պետությունում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների ընդունելության» կարգի և ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 25-ի թիվ 1295-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության» կարգի համաձայն:
5. Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) գործադիր տնօրենին՝ ըստ անհրաժեշտության՝ Նախարարության և ուսումնական հաստատությունների կողմից Հիմնադրամ ներկայացված գրությունների համաձայն, ապահովել օտարերկրացիների կրթության մասին խորհրդատվական տեղեկանքների տրամադրումը:
6. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարում եմ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արևիկ Անափիոսյանին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

 Invalid signature

X 

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ՀՀ կառավարության 2019թվ. ապրիլի 25-ի N 476-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների 2019-2020ու. տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ, առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով սփյուռքահայերի փաստաթղթերի ընդունման (անվճար ուսուցում)

Հ/հ	Կրթական ծրագիր	Փաստաթղթերի ներկայացման ժամկետ	Դիմորդների գիտելիքի ստուգում ուսումնական կողմից՝ համաձայն Նախարարության գրության	Գիտելիքների ստուգման արդյունքների ներկայացում Նախարարություն	Հանձնաժողովի նիստի որոշում	Նախարարության գրության ներկայացում ուսումնական հաստատություններ՝ դիմորդներին հրամանագրելու մասին	Ուսումնական հաստատությունների կողմից դիմորդների հրամանագրման և նրանց կացություն տրամադրելու մասին գրության ներկայացում Նախարարություն	Նախարարության գրության ներկայացում ուստիկանության անձնագրային և վիզաների վարչություն
1.	Անվճար առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով սփյուռքահայ դիմորդների ընդունելության համար	հուլիսի 9-ից մինչև օգոստոսի 13-ը ներառյալ	օգոստոսի 16-ից մինչև օգոստոսի 22-ը	մինչև օգոստոսի 23-ը	մինչև օգոստոսի 27-ը	մինչև օգոստոսի 29-ը	մինչև սեպտեմբերի 3-ը	մինչև սեպտեմբերի 6-ը

«Հ նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում 2019-2020 ուսումնական տարվա համար օտարերկրացիների և սիյուռքահայերի փաստաթղթերի ընդունման (վճարովի ուսուցում)

Հ/հ	Կրթական ծրագիր	Նախարարություն փաստաթղթերի ներկայացման ժամկետ	Դիմորդների գիտելիքի ստուգում ուսումնական հաստատության կողմից և հրամանագրում՝ համաձայն Նախարարության գրության	Ուսումնական հաստատությունների կողմից դիմորդների հրամանագրման և նրանց կացություն տրամադրելու մասին գրության ներկայացում Նախարարություն	Նախարարության գրության ներկայացում ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն
1.	Վճարովի առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության համար	հուլիսի 9-ից մինչև օգոստոսի 23-ը ներառյալ	մինչև օգոստոսի 30-ը	մինչև սեպտեմբերի 3-ը	մինչև սեպտեմբերի 6-ը
2.	Վճարովի առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության համար	հուլիսի 9-ից մինչև օգոստոսի 30-ը ներառյալ	մինչև սեպտեմբերի 6-ը	մինչև սեպտեմբերի 10-ը	մինչև սեպտեմբերի 13-ը
3.	Վճարովի հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ընդունելության համար	հուլիսի 9-ից մինչև հոկտեմբերի 10-ը ներառյալ	մինչև հոկտեմբերի 15-ը	մինչև հոկտեմբերի 21-ը	մինչև հոկտեմբերի 24-ը
4.	Վճարովի հետբուհական՝ ասպիրանտի կրթական ծրագրով ընդունելության համար	հուլիսի 9-ից մինչև դեկտեմբերի 10-ը ներառյալ	մինչև դեկտեմբերի 13-ը	մինչև դեկտեմբերի 18-ը	մինչև դեկտեմբերի 23-ը
5.	Վճարովի առկա ուսուցմամբ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելության համար	հուլիսի 9-ից մինչև օգոստոսի 20-ը ներառյալ	մինչև օգոստոսի 30-ը	մինչև սեպտեմբերի 3-ը	մինչև սեպտեմբերի 6-ը
6.	Վճարովի հեռակա ուսուցմամբ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելության համար	հուլիսի 9-ից մինչև նոյեմբերի 20-ը ներառյալ	մինչև նոյեմբերի 22-ը	մինչև նոյեմբերի 26-ը	մինչև նոյեմբերի 29-ը
7.	Վճարովի առկա ուսուցմամբ նախապատրաստական բաժանմունքում ընդունելության համար	հուլիսի 9-ից մինչև նոյեմբերի 20-ը ներառյալ	մինչև նոյեմբերի 26-ը	մինչև նոյեմբերի 29-ը	մինչև դեկտեմբերի 3-ը

Կ Ա Ձ Մ

Օտարերկրյա և սփյուռքահայ դիմորդների փաստաթղթերի ընդունման,
հաշվառման և փորձաքննության անցկացման

1. Կարեն Մնացականյան Նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության սփյուռքի հետ կապերի բաժնի պետ,
2. Ամալյա Քոչարյան Նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության սփյուռքի հետ կապերի բաժնի առաջատար մասնագետ,
3. Մերի Մարտիրոսյան Նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության արտաքին կապերի բաժնի առաջին կարգի մասնագետ,
4. Կարինե Սմբատյան Նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ: